




ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴՈՒԱԶ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՐՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, անդրադարձնալով տեղական ընտրությունների անցկացման հարցին, նույնիսկ 25-ին լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց, որ դրանք կանցկացվեն սահմանադրությամբ սահմանված ժամկետներում:

Նախագահը խոսեց նաև տեղական ինքնակառավարման ընտրություններին որպես թեմալիսի քաղաքապետի թեկնածու «Վրացական երազանք» իշխող կուսակցության կողմից ներկայիս տարածաշրջանային կառավարման եւ ենթակառուցվածքի նախարար Դավիթ Նարմանիայի թեկնածությունը առաջադրման մասին: Նրա խոսքերով, ինքը նախարարների կաբինետում մի քանի ամիս աշխատել է նրա հետ: «Նրա հետ աշխատելը հաճույք է պատճառում: Նա հավասարակշռված, հանգիստ անձնավորություն է, մարդ, որը կողմնորոշված է նոր նախագծերի եւ դրանց մանրակրկիտ իրականացման ուղղությամբ: Նա այն նախարարն է, ով ոտքով շրջապել է բոլոր այն օբյեկտները, որոնք կառուցվել են նրա հսկողության ներքո: Ուրախ եմ, որ նման մարդը կառաջադրվի թեմալիսի քաղաքապետի պաշտոնի թեկնածու»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նշենք, որ, նույնիսկ 25-ին վարչապետի մամուլ ծառայության կողմից տարածված հաղորդագրությունում նշված է, որ Դավիթ Նարմանիային թեմալիսի քաղաքապետի պաշտոնի թեկնածու առաջադրման հարցը, եւ բոլոր անդամները միաձայն աստարեցին Նարմանիայի թեկնածությունը: Վրաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները տեղի կունենան 2014-ի մայիսին:



ԵՐԿՐԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՁՆԱԾԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԶԷ

Ինչպես հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Վլիխիաշվիլին, երկրի էկոնոմիկան ճգնաժամային իրավիճակում է, չնայած տնտեսական աճի նվազեցմանը, միեւնույն է, այն վավերացվել է 2,5 տոկոսի մակարդակում: «Ներկա դրությամբ, նկատվում է տնտեսական աճի նվազեցում: Նախորդ տարվա համեմատությամբ, մակարդակը ցածր է, թեպետ վավերացվել է 2,5 տոկոսի աճ: Երկրում տնտեսական ճգնաժամ չկա: Ներկայումս մենք ջանքեր ենք գործադրում տնտեսական ոլորտում այնպիսի օբյեկտների ներգրավմանը, ինչպիսիք են փոքր եւ միջին ձեռնարկությունները: Ձանքերը նպատակադրել ենք նաև այդպիսի մեխանիզմների ստեղծմանը, որոնք թույլ կտան գործարարներին իրականացնել բիզնես ծրագրերը: Դրանով մենք կկարողանանք էկոնոմիկայում ներգրավել մեծ քանակությամբ մարդկանց»,- հայտարարեց նախարարը:

ՖԻՆԱՆՍԵՐ

ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿՔՆՆԱՐԿՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խաղոպիճ, կառավարությունը 2014 թվականի բյուջեի նախագծում կատարելիք փոփոխությունների վերջնական տարբերակը կքննարկի նոյեմբերի 29-ին, իսկ ինչ վերաբերում է 2013 թվականի բյուջեի հստակումներին, ապա նախարարի խոսքերով, բացառված չէ, որ առանձին հաստատությունների համար, որոնք բյուջեով հատկացված գումարները չեն յուրացրել, իրականացվեն կրճատումներ: «Ուրբաթ օրը մենք կքննարկենք 2014 թվականի բյուջեի նախագիծը, իսկ 2013 թվականի բյուջեի կիստակեցվի միայն կրճատման ուղղությամբ: Զնարավոր է առանձին նախարարությունների բյուջեում հատկացումները նվազեցվեն»,- ընդգծեց Խաղոպիճ:

Ըստ ֆինանսների նախարարի, ամենայն հավանականությամբ, դեկտեմբերի 19-ին բյուջեի նախագիծը խորհրդարանի կողմից կհաստատվի:

ԵԿԵՂԵՑՎԱԿԱՆ

ՎԵՐԱԾՎԵՅ ԱԼԱԹՈՒՄԱՆԻ «ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ» ԵԿԵՂԵՑԻՆ



Նոյեմբերի 23-ին, ծեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Ջավախեթի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բարգեն վարդապետ Սալբիյանի, Արակվայի եւ հարակից գյուղերի հոգևոր հովիվ Տեր Թադեոս քահանա Տեր-Սկրտչյանի, Տեր Տաթև քահանա Մարությանի եւ Տեր Տիգրան քահանա Մխիթարյանի, օծվեց Ախալքալաքի շրջանի Ալաթուման գյուղի «Սուրբ Երրորդություն» անունը կրող եկեղեցին եւ եկեղեցու բակում կանգնեցված հաչքարը:

Վիրահայոց թեմի առաջնորդը Ջավախեթի, մասնավորապես Ալաթումանի ժողովրդին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ամենայն Յայտց կաթողիկոսի հայրապետական օրհնությունն ու բարեմադրանքը: Ներկայումս իր ողջունն էր հղել Վրաստանում Յայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Զովիաննես Մանուկյանը:

Եկեղեցին վերանորոգվել է տարածքը բարեկարգվել է ռուսաստանաբնակ, ծնունդով ջավախեթցի Ալիկ Մակարյանի բարերարությամբ: Ի հիշատակ բարերարի հոր՝ եկեղեցու բակում կանգնեցվեց հաչքար: Եկեղեցու վերածման տուրք արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Պետրոսյանը, տարածաշրջանի փոխահանգապետ Զարոբյուն Դովհանյանը, Ախալքալաքի շրջանային ժողովի նախագահ Զամբետ Մովսիսյանը, վարչության նախագահ Էդուարդ Արասարյանը, հարեւան շրջաններից, ինչպես նաև Յայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի տարբեր անկյուններից ժամանած հյուրեր, ուխտավորներ:

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2013»

ԿԻԵՎԸ ԿՐՅՈՒՐԸՆԿԱԼԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆԸ

«Մանկական Եվրատեսիլ-2013» երգի մրցույթն այս տարի կանցկացվի Ուկրաինայի մայրաքաղաք Կիևի Արվեստների ազգային պալատում նոյեմբերի 30-ին՝ Be Creative նշանաբանի ներքո:



Մանկական երգի փառատոնին Վրաստանը «Give me your Smile» ներկայացնում է «The smile shop», որը հանդես է գալու 9-րդ համարի տակ, իսկ Յայաստանը ներկայացնող Մոնիկա Ավանեսյանն իր Choco Factory՝ «Շոկոլադի ֆաբրիկա» երգով ելույթ կունենա 3-րդ համարի ներքո՝ հաջորդելով Շվեդիային եւ Ադրբեջանին: Այս տարի մրցույթի անցկացման կարգում մի շարք նորանվազներ են կատարվել: Ներկայացվող երգերի առավելագույն թույլատրելի տևողությունը 3 րոպե է: Միավորներ հայտնող պատանիները քվեարկության արդյունքները կհայտարարեն ոչ թե տեսանյութի միջոցով, այլ՝ հենց համերգային բեմից:

Մրցույթին մասնակցում է 12 երկիր՝ Յայաստանը, Ադրբեջանը, Բելոռուսը, Վրաստանը, Մակեդոնիան, Մալթան, Մոլդովան, Լիբերիանդները, Ռուսաստանը, Սան Մարինոն, Ուկրաինան, Շվեդիան: «Մանկական Եվրատեսիլ- 2013» տարբերանշանը Puzzle Man է:

ՇԱԽՄԱՏ

ՄԱԳՆՈՒՄ ԿԱՐԼՍԵՆԸ ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ՉԵՄՊԻՈՆ



Զնդիկ Վիշվանաթան Անանդը զիջեց շախմատի աշխարհի չեմպիոնի գահը Մագնուս Կարլսենին: Շախմատի աշխարհի 16-րդ չեմպիոնը նորվեգացին է:

Կարլսենի 2861 միավոր ռեկորդային եւ շախմատի ամբողջ պատմության համար: 2013թ.-ին «Time» հանդեսը Մագնուս Կարլսենին ընդգրկեց աշխարհի ամենաազդեցիկ 100 մարդկանց ցուցակում: Նորընծա չեմպիոնը հաղթել է նաև մի շարք միջազգային մրցաշարերում:

Ռեքի խաղալով դեռևս գործող չեմպիոնի՝ Վ.Անանդի հետ, Կարլսենը դարձավ շախմատի աշխարհի նոր չեմպիոն: Անցկացրած 10 պարտիաներից հետո Կարլսենը հավաքեց 6,5 միավոր, իսկ Անանդը՝ ընդամենը 3,5: Մրցաշարը բաղկացած է 12 պարտիայից, սակայն Կարլսենն արդեն անհասանելի դարձավ Անանդի համար:

Միջազգային մասնակցում է 12 երկիր՝ Յայաստանը, Ադրբեջանը, Բելոռուսը, Վրաստանը, Մակեդոնիան, Մալթան, Մոլդովան, Լիբերիանդները, Ռուսաստանը, Սան Մարինոն, Ուկրաինան, Շվեդիան: «Մանկական Եվրատեսիլ- 2013» տարբերանշանը Puzzle Man է:

Advertisement for VRASTAN (ՎՐԱՏԱՆ) with contact information: Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒԹՅԱՆ, Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Գեո. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net, Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» իրատարակչություն, «ՎՐԱՏԱՆ» Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445